Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի «Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 04 դեկտեմբերի 2025թ. կազմակերպված «ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Մասնակից) ինչի արդյունքում 12.01.2026թ. «Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ԳՀԱՊՁԲ-01/26-6» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր:

«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն 11.02.2026թ. գրություն է ներկայացրել պատվիրատուին, համաձայն որի հրաժարվում է մատակարարել ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ԳՀԱՊՁԲ-01/26-6» ծածկագրով կնքված պայմանագրի 7-րդ և 22-րդ չափաբաժինները:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերությամբ՝ (խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը) և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ԳՀԱՊՁԲ-01/26-6	7,22,	7, Բուսական յուղ/ձեթ/ 22,Կարագ	7. 175000 22. 712800	«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	ՀՀ, ք. Արմավիր, Սահմանապահների փ. տուն 34	11.02.2026թ.	«Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հրաժարվել է պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումից	Ներկայացրել է գրություն համաձայն որի հրաժարվում է պայմանագրով ստանձնած պարտավորություններից:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. Գալստյան